*էլա քի՛ ոչ մէկին նշան չգնեն մինչեւ եգնան հարսի քշտին կանգնած չիլի. լաւ իմացըլա, որ մեր ջահիլները նոտան կըտրում նշանը, մհանայ անելով, թա՛ ես չո՛ւմ ուզալ, չո՛ւմ տեսալ աղջկան, ու ամիսը մի աղջկայ ան նշան տամ։ Լա՛ւ լա՛ւ, Ջարաֆիլ բաշի, ախճանց բանեը մի՛ խօսալ, մեր ադաթը փոխիլ չո՛նք, մենք օլեա (խօրթ) մէր չո՛նք։*

*Ալքա՛ Ջա՛մբաղ բաշի՛, աս մի ադաթն ալ լաւ չիլալ մեղտի, որ տէր բաբան կեամ չի հարսնքատունը, եա կնքատունը հաց ուտելի։ Չէ՛, Ջառի բաշի, աւալ ախճանց չո՛ր, աւալ առանց տէր բաբին սուֆրան օխնելի ո՛վ կարար հաց ուտել, հէր, հիմա զօվրանը փոխուելա՛, հի՛նչ ա իլալ, ա եա՛, ախճանցա իլալ, հի՛նչ անանք։ Չէ՛, աստուման քի՛ լամսաները ախճանցան անում, մենք ալ անք անում, ա՛ քա՛, բա մե՛ղք չի՛ խեղճ տէր բաբան, չարչարուի պսակն անի, յետոյ՝ տուզնը ծարաւ քընա իրէն տունը։ Դէ նստէր մին պատառ հաց ուտէր ալ հի՛նչ կիլէ՛ր։ Դա հի՛նչ ադաթա, Ջամբաղ բաշի, աղ հի՛նչ մեր բաննա, տղամարդիկը թող ֆիքըր անան։ Չէ, Ջառի բաշի՛, մինիկ աստումամ քի՛, տէր բաբին թա որ հաց չան տուրում հարսընքատանը, դէ մին խօնչայ հաց ու խօրակնի չինեն տանեն տէր բաբի տունը, որ ուտի օխնի հարսն ու փեսին, լաւ չիլի՞լ. հէր, լա՛ւ կիլի. համա մեր Ճամախեցիք չան տամ հա՛, աս տարի, մինիկ Լալայօվը հաց ուտուր տէրտէրներին։*

*Ա, քա՛, ախճանց բաները չիմ լութերեանները սարքեցին, ադաթ քցեցին, փչանան լամսաները, չիմիկ ադաթն ալ խարապան արալ։*

*Ախճա՛նց ան արալ, որ համաշա տափը գիւրիւր ա կեամ է, Աստուծոյ զուլումը պակաս չիլում Ճամախից, հուրա՛ Գուբեանի ժամանակի Ճամախին, գի՛փ քար ու քանդա իլալ, քնացալ՝*
Հա՜յ գիդի ժամանակ հա՜ — ։

---

Ծանօթութիւն. 1) — Ա տառը Ղարաբաղցւոց և Ագուլեցի Զօկերի Ա. ի նման փափուկ պէտք է հնչել, որ կէս Ա ի ձայն հանէ, ինչպէս Փրանսերէն a (Տես Ագուլեցւոց բարբառը — Զօկերի լեզուն. Սարգիս Սարգսեանցի 1883. Մոսկուա, յերես 25.)։ 2) Բառը Նոր Ջուղայեցւոց նման (Պարսկերէնի) ձգելով պէտք է առել կոր օրինակ՝ «Թուրո՜ղ, ախճանց կիմ՛ «Հայ իլելով իլելմ»։